Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2021թ. ապրիլի 17-ի թիվ 4 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան
«17» 04. 2021թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳ

(փոփոխություններով)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերի ուսանողների ամփոփիչ ատեստավորման կարգը (այսուհետ՝ Կարգ) տարածվում է Համալսարանում կրթական բոլոր ծրագրերում և ուսուցման բոլոր ձևերով սովորած անձանց վրա:

2. Սույն Կարգով կարգավորվում են Համալսարանում ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների ձևավորման, ատեստավորման արդյունքների բողոքարկման հետ կապված հարաբերությունները:

II. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՁԵՎԸ

3. Ամփոփիչ ատեստավորումը Համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերի ուսանողների (այսուհետ՝ ուսանող) գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումն է, որն իրականացվում է բակալավրի ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի պաշտպանության միջոցով, համապատասխան որակավորում շնորհելու նպատակով:

4. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները հաստատում են Համալսարանի ֆակուլտետների խորհուրդները: Բակալավրի ավարտական աշխատանքի թեման և ղեկավարը հաստատվում են ավարտական ուսումնական տարվա առաջին կիսամյակի սկզբին, իսկ մագիստրոսական թեզինը՝ մինչև առաջին կուրսի առաջին կիսամյակի ավարտը:

5. Ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը, ղեկավարի գրավոր կարծիքի առկայությամբ /Հավելված 1, Հավելված 2 /, ենթակա են գրախոսման, ընդ որում՝ բակալավրի ավարտական աշխատանքի դեպքում՝ ներքին կամ արտաքին /Հավելված 3 /, իսկ մագիստրոսական թեզի դեպքում՝ արտաքին գրախոսի կողմից /Հավելված 4/: Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գրախոսման համար հրավիրվում են արտադրության, գիտական հիմնարկների և այլ հաստատությունների համապատասխան մասնագետներ, որոնց կազմը, ամբիոնի վարիչի ներկայացմամբ, հաստատվում է ամբիոնի նիստում: Գրախոսման կարգը հաստատում է Համալսարանի գիտական խորհուրդը:

6. Համալսարանը ուսանողների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստման ու գնահատման համար մշակում է ընթացակարգեր և մեթոդական ուղեցույցներ:

III. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

7. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը բաղկացած է նախագահից և անդամներից: Հանձնաժողովը կազմավորվում է՝ ըստ որակավորման մակարդակների, յուրաքանչյուր մասնագիտության կամ կրթական ծրագրի գծով՝ ուսուցման բոլոր ձևերի համար:

8. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահին, ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ, նշանակում է Համալսարանի ռեկտորը՝ համապատասխան ոլորտի (բնագավառի) գործընկեր կազմակերպությունների, գերատեսչությունների, ակադեմիական հաստատությունների գիտական աստիճան և /կամ կոչում ունեցող մասնագետներից, ովքեր Համալսարանի աշխատողներ չեն և նախորդող երկու տարիների ընթացքում չեն եղել տվյալ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ:

9. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմը հաստատում է Համալսարանի ռեկտորը ամփոփիչ ատեստավորումից առնվազն երեք շաբաթ առաջ:

10. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել տվյալ ոլորտի գործատուների և ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչներ, համապատասխան ֆակուլտետի դեկանը կամ նրա տեղակալը, ամբիոնների վարիչները, պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամներ:

11. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստերն արձանագրում է քարտուղարը, ով Համալսարանի աշխատակից է և հանձնաժողովի անդամ չէ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմի առնվազն 50 տոկոսը պետք է լինեն Համալսարանի հաստիքային աշխատակից չհանդիսացող անձինք:

12. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում Համալսարանի ռեկտորի հրամանով նշանակվում է փոխարինող՝ հանձնաժողովի կազմից:

13. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է սույն Կարգով և Համալսարանի գիտական խորհրդի հաստատած ընթացակարգերով և մեթոդական ուղեցույցներով:

14. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գործառույթներն են՝

1) ստուգել ուսանողի պատրաստվածության մակարդակի համապատասխանությունը կրթական ծրագրով սահմանված նպատակներին և վերջնարդյունքներին,

2) կայացնել որոշում ամփոփիչ ատեստավորման արդյունքներով շրջանավարտին որակավորում շնորհելու (կամ չշնորհելու) և նրան բարձրագույն կրթության համապատասխան դիպլոմ տալու (կամ չտալու) վերաբերյալ,

3) մշակել և ներկայացնել առաջարկություններ տվյալ մասնագիտությամբ մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման վերաբերյալ:

15. Յուրաքանչյուր ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի աշխատանքի ժամանակացույցը համաձայնեցվում է հանձնաժողովի նախագահի հետ, և ֆակուլտետի

դեկանի ներկայացմամբ հաստատում է Համալսարանի ռեկտորը: Հաստատված ժամանակացույցի մասին ուսանողները տեղեկացվում են ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունից առնվազն երկու շաբաթ առաջ:

IV. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

16. Ամփոփիչ ատեստավորման թույլատրվում են այն ուսանողները, ովքեր ավարտել են ուսուցումը բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրով և կուտակել են համապատասխան կրեդիտներ: Ամփոփիչ ատեստավորման ենթակա ուսանողների ցանկը հաստատվում է Համալսարանի ռեկտորի հրամանով: Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանությունն անցկացվում է ուսումնական պլանով սահմանված ժամկետներում:

17. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանությունն անցկացվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բաց նիստում՝ հանձնաժողովի կազմի երկու երրորդից ոչ պակաս անդամների ներկայության դեպքում: Նախագահի կամ նրան փոխարինող անձի ներկայությունը պարտադիր է: Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանությունից առաջ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին է ներկայացվում անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը /Հավելված 9, Հավելված 10/:

18. Արտակարգ կամ ռազմական դրության ռեժիմի, անհաղթահարելի ուժի ազդեցության պայմաններում, կամ առողջական խնդիրներով կամ այլ հարգելի պատճառներով արտասահմանում գտնվող ուսանողի կամ նրա ներկայացուցչի դիմումի և պատճառը հիմնավորող փաստաթղթի հիման վրա Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ կարող է կազմակերպվել ամփոփիչ ատեստավորման գործընթաց՝ հեռավար, առցանց ձևաչափով:

19. Հեռավար ամփոփիչ ատեստավորման դեպքում ուսանողը միանում է Համալսարանի համապատասխան վիրտուալ լսարանին և պաշտպանում ավարտական աշխատանքը կամ մագիստրոսական թեզը:

20. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանության ընթացակարգային պահանջների համաձայն՝ ամփոփիչ ատեստավորման ընթացքն արձանագրվում և ձայնագրվում է: Ձայնագրությունը պահպանվում է արդյունքները հրապարակելուց հետո 6 ամիս:

21. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանության արդյունքները գնահատվում են «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար»՝ ըստ Համալսարանում գործող գնահատման սանդղակի /Հավելված 5, Հավելված 6, Հավելված 7, Հավելված 8/: Գնահատականները հայտարարվում են նույն օրը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմելուց հետո՝ մեկ ժամվա ընթացքում:

22. Հիմք ընդունելով ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանության դրական («բավարար», «լավ», «գերազանց») արդյունքների վերաբերյալ արձանագրությունը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը կայացնում է որոշում ուսանողին համապատասխան որակավորում շնորհելու և նրան

բարձրագույն կրթության դիպլոմ տալու մասին: Բացասական («անբավարար») արդյունքի կամ ատեստավորմանը չներկայանալու դեպքերում ուսանողին որակավորում չի շնորհվում, և բարձրագույն կրթության դիպլոմ չի տրվում:

23. Գերազանցության դիպլոմ տրվում է ամփոփիչ ատեստավորումը «գերազանց» գնահատականով հանձնած այն ուսանողներին, ովքեր ապահովել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) առավելագույն արժեքի 90 %-ը:

24. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի փակ նիստում: Ուսանողի ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի գնահատականը որոշվում է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականով:

25. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բոլոր որոշումները քարտուղարն արձանագրում է Համալսարանի կողմից սահմանված կարգով: Արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նախագահը և նիստին մասնակցած անդամները: Արձանագրությունները պահվում են Համալսարանում /Հավելված 9, Հավելված 10/: Արձանագրության մեջ նշվում են ավարտական աշխատանքների կամ մագիստրոսական թեզերի գնահատականները, ինչպես նաև տրված հարցերը, հատուկ կարծիքները և այլն: Արձանագրության մեջ նշվում են շնորհված որակավորումը, աստիճանը և Համալսարանն ավարտողի դիպլոմի տեսակը:

26. Ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի պաշտպանությանը թույլատրված, բայց չներկայացած կամ «անբավարար» գնահատված ուսանողին թույլատրվում է նոր պաշտպանություն՝ հաջորդ ուսումնական տարվա ավարտին կամ հետագա տարիներին՝ Համալսարանի կողմից սահմանած կարգով և ժամկետներում: Ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի վերահանձնումն իրականացվում է՝ համաձայն սույն Կարգի և Համալսարանում սահմանված ընթացակարգի:

27. Համալսարանի կողմից թույլատրված ուսուցման ձևով և ժամկետներում արտասահմանում մասնակի ուսումնառություն անցած ուսանողների ավարտական աշխատանքների կամ մագիստրոսական թեզերի պաշտպանությունը ֆակուլտետի խորհրդի առաջարկությամբ կարող է իրականացվել Համալսարանի ռեկտորի կողմից հաստատված առանձին ժամկետներում՝ սույն Կարգի պահանջների համաձայն:

28. Համալսարանի և այլ հաստատությունների կողմից իրականացվող համատեղ կրթական ծրագրերի ուսանողների համար կարող է կազմակերպվել համատեղ ամփոփիչ ատեստավորում՝ նախապես փոխհամաձայնեցված և համապատասխան պայմանագրով հաստատված ընթացակարգերով՝ պահպանելով սույն Կարգի կանոնները:

29. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունը /Հավելված 11/ քննարկվում է համապատասխան ֆակուլտետի խորհրդում, ապա նաև Համալսարանի գիտական խորհրդում և ամփոփիչ ատեստավորման ավարտից հետո երկշաբաթյա ժամկետում ներկայացվում է Համալսարանի ռեկտորին: Ամփոփիչ ատեստավորումից հետո Համալսարանը ամփոփ տեղեկատվություն է ներկայացնում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

30. Ամփոփիչ ատեստավորման գնահատականը (անբավարար, բավարար, լավ, գերազանց) ենթակա է լրացուցիչ քննարկման և բողոքարկման, եթե

1) ուսանողն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովից պահանջում է լրացուցիչ մեկնաբանություններ իր գնահատականի վերաբերյալ,

2) գնահատականի վերաբերյալ ուսանողը բողոք է ներկայացնում առցանց պաշտպանության արդյունքում:

31. Ամփոփիչ ատեստավորման արդյունքի բողոքարկման ընթացակարգային պահանջներն են.

1) ուսանողը կարող է բողոքարկել ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի գնահատականը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահին, արդյունքները հրապարակելուց հետո 1 ժամվա ընթացքում,

2) գրավոր բողոքը ներկայացվում է հանձնաժողովի նախագահին, որի քննարկումը կազմակերպվում է նույն օրը,

3) գրավոր բողոքի քննարկմանը մասնակցում են Համալսարանի վարչական անձնակազմի, տվյալ հանձնաժողովի անդամ չհանդիսացող աշխատակիցը և Համալսարանի ուսանողական խորհրդի ներկայացուցիչը, որոնց թեկնածությունները նախապես հաստատվում են Համալսարանի ռեկտորի կողմից,

4) ուսանողի ներկայությամբ կամ առցանց մասնակցությամբ լսվում է պատասխանի ձայնագրությունը: Բողոքարկման արդյունքում բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, կայացվում է որոշում՝

ա) գնահատականը թողնել անփոփոխ,

բ) գնահատականը բարձրացնել,

5) ընդունած որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի, Համալսարանի վարչական անձնակազմի, ուսանողական խորհրդի ներկայացուցիչների և ներկա գտնվող շրջանավարտի կողմից: Կայացված որոշմանը անհամաձայնություն հայտնելու դեպքում գրավոր ներկայացվում է հատուկ կարծիք, որը կցում է արձանագրությանը,

6) գնահատականի փոփոխման դեպքում արձանագրությունների մատյանում կատարվում է համապատասխան գրառում:

32. Ամփոփիչ ատեստավորումից «անբավարար» գնահատական ստացած ուսանողին իր ցանկությամբ տրվում է սահմանված ձևի ակադեմիական տեղեկանք: Տեղեկանքը տրվում է անվճար, Համալսարանի ռեկտորին՝ նախկին ուսանողի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Հավելված 1

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԾԻՔ

Ֆակուլտետ _____
Մասնագիտական կրթական ծրագիր _____

Ուսանող _____
/ազգանուն, անուն, հայրանուն/
Աշխատանքի թեման _____

1. Բակալավրի ինքնուրույն հետազոտություն կատարելու կարողությունները

_____

_____

2. Կարծիք պաշտպանության ներկայացվող դրույթների վերաբերյալ

_____

_____

3. Համապատասխանությունը բակալավրի ավարտական աշխատանքին ներկայացվող պահանջներին

_____

_____

_____

4. Եզրակացություն ավարտական աշխատանքը հրապարակային պաշտպանության երաշխավորելու (կամ մերժելու) մասին

_____

_____

Գիտական ղեկավար՝ _____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

_____
(գիտական աստիճանը, կոչումը)

«_____» _____ 202_ թ.

Հավելված 2

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԾԻՔ

Ֆակուլտետ_____

Մասնագիտական կրթական ծրագիր _____

Ուսանող _____

/ազգանուն, անուն, հայրանուն/

Թեզի թեման _____

1. Թեզի գիտատեսական, գործնական նորույթը

_____

_____

_____

2.Պաշտպանության ներկայացվող դրույթների, եզրակացությունների վերլուծություն

_____

_____

_____

3. Մագիստրոսի՝ ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու, հիմնավորված եզրակացություններ կատարելու կարողությունները

_____

_____

_____

4. Համապատասխանությունը մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջներին

_____

_____

5. Եզրակացություն մագիստրոսական թեզը հրապարակային պաշտպանության երաշխավորելու (կամ մերժելու) մասին

_____

_____

_____

Գիտական ղեկավար՝ _____ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

_____

(գիտական աստիճանը, կոչումը)

«_____» _____ 202_ թ.

Հավելված 3

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԳՐԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Ֆակուլտետ_____
Մասնագիտական կրթական ծրագիր _____

Ուսանող _____
/ազգանուն, անուն, հայրանուն/

Աշխատանքի թեման _____

1. Աշխատանքի թեմայի արդիականությունը, նորույթը

_____
_____
_____

Գնահատականը _____
/գնահատվում է առավելագույնը 10 միավոր/

2. Աշխատանքի ընդհանուր բնութագիրը /հետազոտության առարկան, նպատակը, խնդիրները, կառուցվածքը, մեթոդները, աղբյուրները, այլ/,

_____
_____
_____
_____

Գնահատականը _____
/գնահատվում է առավելագույնը 30 միավոր/

3. Բովանդակության ամբողջականությունը, հետազոտության արդյունքները, արված եզրակացությունները/

_____
_____
_____

Գնահատականը _____
/գնահատվում է առավելագույնը 40 միավոր

4. Աշխատանքին ներկայացվող պահանջների պահպանումը /շարադրանքի որակը, մեջբերումները, հղումները, օգտագործված գրականության ցանկը, համառոտագրությունները, աղյուսակները, հավելվածները, տեխնիկական այլ պահանջներին համապատասխանությունը/

_____
_____

_____
_____
_____
Գնահատականը _____
/գնահատվում է առավելագույնը 20 միավոր/

5. Դիտարկումներ աշխատանքի թերությունների և բացթողումների վերաբերյալ

_____
_____
_____
_____
_____
_____

6. Եզրակացություն /աշխատանքի գնահատումը/

_____
_____
_____
_____

Գրախոս՝_____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

_____
(գիտական աստիճանը, կոչումը)

«_____» _____ 202_ թ.

Հավելված 4

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԳՐԱԽՈՍԻ
ԿԱՐԾԻՔ

Ֆակուլտետ _____
Մասնագիտական կրթական ծրագիր _____
Ուսանող _____
/ազգանուն, անուն, հայրանուն/

Թեզի թեման _____

1. Թեզի թեմայի արդիականությունը, նորույթը

_____
_____
_____

Գնահատականը _____
/գնահատվում է առավելագույնը 10 միավոր/

2. Թեզի ընդհանուր բնութագիրը /հետազոտության առարկան, նպատակը, խնդիրները, կառուցվածքը, մեթոդները, աղբյուրները, այլ/

_____
_____
_____

Գնահատականը _____
/գնահատվում է առավելագույնը 30 միավոր/

3. Բովանդակության ամբողջականությունը, հետազոտության արդյունքները և արված եզրակացությունները

_____
_____
_____
_____

Գնահատականը _____
/գնահատվում է առավելագույնը 40 միավոր/

4. Մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջների պահպանումը /շարադրանքի որակը, մեջբերումները, հղումները, օգտագործված գրականության ցանկը, համառոտագրությունները, աղյուսակները, հավելվածները, տեխնիկական այլ պահանջներին համապատասխանությունը/

_____
_____
_____
_____

Գնահատականը _____
/գնահատվում է առավելագույնը 20 միավոր/

5. Դիտարկումներ թեզի թերությունների և բացթողումների վերաբերյալ

_____
_____
_____
_____

6. Եզրակացություն /թեզի գնահատումը/

_____
_____
_____
_____

Գրախոս՝_____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

_____
(գիտական աստիճանը, կոչումը)

«_____» _____ 202_ թ.

Հավելված 5

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ուսումնական տարին՝
Ֆակուլտետը՝
Մասնագիտական կրթական ծրագիրը՝
Կրեդիտների քանակը՝
Գնահատող՝ Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամ
Օրը, ամիսը, տարեթիվը՝

Հ/Հ	Ուսանողի ԱԱՀ	Արդիականությունը, նորույթը (10)	Բովանդակությունը (30)	Համապատասխանությունը պահանջներին (30)	Ներկայացումը, պաշտպանությունը (30)	Ընդամենը (100) միավոր	Ստորագրությունը
1.							
2.							
3.							
4.							
5.							

Դեկան՝----------

Հավելված 6

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ուսումնական տարին՝
Ֆակուլտետը՝
Մասնագիտական կրթական ծրագիրը՝
Կրեդիտների քանակը՝
Գնահատող՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողով
Օրը, ամիսը, տարեթիվը՝

Հ/Հ	Ուսանողի ԱԱՀ	Արդիականությունը, նորույթը (10)	Բովանդակությունը (30)	Համապատասխանությունը պահանջներին (30)	Ներկայացումը, պաշտպանությունը (30)	Ընդամենը (100) միավոր	Տառային նշանակումը	Թվային նշանակումը	Ստորագրությունը
1.									
2.									
3.									

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամներ (անուն, ազգանուն)՝
1. _____ (ստորագրություն)
2. _____ (ստորագրություն
3. _____ (ստորագրություն)
4. _____ (ստորագրություն)
Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ՝----------(ստորագրություն)

Դեկան՝----------

Հավելված 7

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ուսումնական տարին՝
Ֆակուլտետը՝
Մասնագիտական կրթական ծրագիրը՝
Կրեդիտների քանակը՝
Գնահատող՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամ
Օրը, ամիսը, տարեթիվը՝

Հ/Հ	Ուսանողի ԱԱՀ	Արդիականությունը, նորույթը (10)	Բովանդակու թյունը (35)	Համապատասխանությունը պահանջներին (35)	Ներկայացումը, պաշտպանությունը (20)	Ընդամենը (100) միավոր	Ստորագրությունը
1.							
2.							
3.							
4.							
5.							
6.							

Դեկան՝----------

Հավելված 8

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ուսումնական տարին՝
Ֆակուլտետը՝
Մասնագիտական կրթական ծրագիրը՝
Կրեդիտների քանակը՝
Գնահատող՝ Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողով
Օրը, ամիսը, տարեթիվը՝

Հ/Հ	Ուսանողի ԱԱՀ	Արդիականությունը, նորույթը (10)	Բովանդակությունը (35)	Համապատասխանությունը պահանջներին (35)	Ներկայացումը, պաշտպանությունը (20)	Ընդամենը (100) միավոր	Տառային նշանակումը	Թվային նշանակումը	Ստորագրությունը
1.									
2.									
3.									

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամներ (անուն, ազգանուն)՝
1. _____ (ստորագրություն)
2. _____ (ստորագրություն
3. _____ (ստորագրություն)
4. _____ (ստորագրություն)
Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ՝----------(ստորագրություն)

Դեկան՝----------

Հավելված 9

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ___

ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

«____» _____ 202_ թ.

Ուսանողի ----------
(ազգանուն, անուն, հայրանուն)

_____

_____ թեմայով
ավարտական աշխատանքի պաշտպանության վերաբերյալ
Մասնակցում էին՝ նախագահ _____
անդամներ _____

_____

_____

_____

Աշխատանքը կատարվել է _____ ղեկավարությամբ:
Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին ներկայացված են հետևյալ նյութերը՝

ա)_____ ֆակուլտետի ----- 202-թ.
_____տեղեկանքը շրջանավարտի հանձնած քննությունների, ստուգարքների և ուսումնական պլանի այլ պահանջների կատարման մասին:

բ) Աշխատանքի գծագրեր (աղյուսակներ)՝ _____ թերթ:

գ) Ավարտական աշխատանքի վերաբերյալ ղեկավարի կարծիքը՝ ___թերթ:

դ) Ավարտական աշխատանքի վերաբերյալ գրախոսի կարծիքը՝____թերթ:

Կատարված աշխատանքի ներկայացումից հետո ուսանողին տրված հարցերը՝

1._____

_____

(հարց տվող անձի անուն, ազգանունը, հարցի բովանդակությունը)

2._____

_____

(հարց տվող անձի անուն, ազգանունը, հարցի բովանդակությունը)

3._____

_____

(հարց տվող անձի անուն, ազգանունը, հարցի բովանդակությունը)

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի

ՈՐՈՇՈՒՄԸ

1. Շրջանավարտ _____-ի
ավարտական աշխատանքը գնահատել «_____»:

2.Բողոքարկումից հետո փոփոխված գնահատականը (բողոքարկման դեպքում)
_____

3. ---------- ին շնորհել
_____
_____ որակավորում_____
_____մասնագիտությամբ և տալ
դիպլոմ _____
(սովորական, գերազանցության)

ԱԱՀ նախագահ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ԱԱՀ անդամներ (անուն, ազգանուն)

1. _____ (ստորագրություն)
2. _____ (ստորագրություն
3. _____ (ստորագրություն)
4. _____ (ստորագրություն)

Քարտուղար, անուն, ազգանուն և պաշտոն _____
_____ (ստորագրություն)

Հավելված 10

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ ____
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

«____» _____ 20__թ.

Ուսանող _____
(ազգանուն, անուն, հայրանուն)
_____
_____
_____ թեմայով

մագիստրոսական թեզի պաշտպանության վերաբերյալ
Մասնակցում էին՝ նախագահ _____
անդամներ _____
_____
_____
_____

Թեզը կատարվել է _____ ղեկավարությամբ:
Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին ներկայացված են հետևյալ նյութերը՝

ա)_____ ֆակուլտետի 20__ թ. _____տեղեկանքը շրջանավարտի հանձնած քննությունների, ստուգարքների և ուսումնական պլանի պահանջների կատարման մասին:
բ) Թեզի գծագրեր (աղյուսակներ)՝ _____ թերթ:
գ) մագիստրոսական թեզի վերաբերյալ ղեկավարի կարծիքը _____ թերթ:

դ) մագիստրոսական թեզի վերաբերյալ գրախոսի կարծիքը _____ թերթ :
Մագիստրոսական թեզի ներկայացումից հետո ուսանողին տրված հարցերը՝

1._____
_____
(հարց տվող անձի անուն, ազգանունը, հարցի բովանդակությունը)

2._____
_____
(հարց տվող անձի անուն, ազգանունը, հարցի բովանդակությունը)

3._____
_____
(հարց տվող անձի անուն, ազգանունը, հարցի բովանդակությունը)

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի

ՈՐՈՇՈՒՄԸ

1. Շրջանավարտ _____-ի մագիստրոսական թեզը գնահատել «_____»:

2.Բողոքարկումից հետո փոփոխված գնահատականը (բողոքարկման դեպքում) _____

3. ----------ին շնորհել _____ _____ որակավորում_____ _____մասնագիտությամբ և տալ դիպլոմ _____

(սովորական, գերազանցության)

ԱԱՀ նախագահ

_____

(ստորագրություն)(անուն, ազգանուն)

ԱԱՀ անդամներ (անուն, ազգանուն)

1. _____ (ստորագրություն)
2. _____ (ստորագրություն
3. _____ (ստորագրություն)
4. _____ (ստորագրություն)
5. _____ (ստորագրություն)
6. _____ (ստորագրություն)

Քարտուղար, անուն, ազգանուն և պաշտոն _____ _____ (ստորագրություն)

Հավելված 11

ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«____» _____ 20_ թ.

Ուսումնական տարի՝

Ֆակուլտետ՝

Կրթական աստիճան՝

Մասնագիտական կրթական ծրագիր՝

Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցած շրջանավարտների թիվը՝

Ամփոփիչ ատեստավորումն անցած շրջանավարտների թիվը-------

Գնահատականները.

«գերազանց» (81-100)_____

«լավ» (61-80)_____

«բավարար» (40-60)_____

«անբավարար»_____

«չներկայացած»_____

Բողոքարկման արդյունքում փոփոխված գնահատականների թիվը _____:

Հանձնաժողովի դիտարկումները շրջանավարտների պատրաստման որակի վերաբերյալ.

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Հանձնաժողովի առաջարկությունները մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման մասին.

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ԱԱՀ ՆԱԽԱԳԱՀ՝ _____ (ստորագրություն)

Հավելված 12

Հարգելի՛ պարոն /տիկին/----,

Գրախոսության է ուղարկվում Գավառի պետական համալսարանի -----ֆակուլտետի ---- ամբիոնի 20---20-- ուսումնական տարվա բակալավրիատի /մագիստրատուրայի/ 4-րդ /2-րդ/ կուրսի ուսանող _____ -ի «_____» թեմայով աշխատանքը /թեզը/:

Խնդրում ենք աշխատանքի /թեզի/ գրախոսի կարծիքը տրամադրել 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ գրախոսություններին ներկայացվող պահանջներին համապատասխան:

ԳՊՀ ---------ամբիոնի վարիչ

Ամսաթիվ, տարեթիվ